

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵԴԵԿԱԳԻՐ ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ

ЕРЕВАН

Журнал издается с 5.01.1948 г.
Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (գլխավոր խմբագիր), Հ.Ա. ԹԵՐԶՅԱՆ (գլխ. խմբ. տեղակալ),
Զ.Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար), Ս.Գ. ԱԴԲԱԼՅԱՆ, Ռ.Վ. ԱՌՈՅԱՆ,
Վ.Վ. ԲՈՒՆԻԱՏՅԱՆ, Ա.Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ժ.Դ. ԴԱՎԻԴՅԱՆ, Ս.Պ. ԴԱՎԹՅԱՆ,
Ս.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Ռ.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ,
Վ.Ս. ՍԱՖԱՐՅԱՆ, Ս.Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ, Ա.Թ. ՔՈՒՉՈՒԿՅԱՆ

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Р.М. МАРТИРОСЯН (главный редактор), А.А. ТЕРЗЯН (зам. глав. редактора),
З.К. СТЕПАНЯН (ответственный секретарь), С.Г. АГБАЛЯН, Р.В. АТОЯН,
В.В. БУНИАТЯН, А.Х. ГРИГОРЯН, Ж.Д. ДАВИДЯН, С.П. ДАВТЯН, С.М. КАЗАРЯН,
А.Т. КУЧУКЯН, В.З. МАРУХЯН, Ю.Л. САРКИСЯН, В.С. САРКИСЯН,
В.С. САФАРЯН, С.О. СИМОНЯН, М.Г. СТАКЯН

EDITORIAL BOARD

R.M. MARTIROSSYAN (editor-in-chief), H.A. TERZYAN (vice-editor-in-chief),
Z.K. STEPANYAN (executive secretary), S.G. AGHBALYAN,
R.V. ATOYAN, V.V. BUNIATYAN, Zh.D. DAVIDYAN,
S.P. DAVTYAN, S.M. GHAZARYAN, A.Kh. GRIGORYAN, A.T. KUCHUKYAN,
V.Z. MARUKHYAN, YU.L. SARGSYAN, V.S. SARKISSYAN, V.A. SAFARYAN,
S.H. SIMONYAN, M.G. STAKYAN

Հրատ. խմբագիր՝

Ժ.Ս. ՍԵՅՐԱՆՅԱՆ

Խմբագիրներ՝

Հ.Յ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

© Издательство ГИУА
Известия НАН и ГИУ Армении (сер. техн. наук), 2014

Ю.Л. САРКИСЯН, К.Г. СТЕПАНЯН, С.В. ВЕРЛИНСКИЙ

**АППРОКСИМАЦИОННЫЙ СИНТЕЗ РЕКОНФИГУРИРУЕМЫХ
ПАРАЛЛЕЛЬНЫХ МАНИПУЛЯТОРОВ С ОГРАНИЧЕННОЙ
ПОДВИЖНОСТЬЮ ПО МИНИМАКСНОМУ КРИТЕРИЮ ТОЧНОСТИ**

Рассмотрены задачи аппроксимационного синтеза реконфигурируемых параллельных манипуляторов с ограниченным числом степеней свободы по минимаксному критерию точности реализации заданных последовательностей положений твердого тела. На основе методов линейного чебышевского приближения и нелинейного программирования разработаны простые алгоритмы численного решения сформулированных минимаксных задач.

Ключевые слова: реконфигурируемый манипулятор, параллельный манипулятор, аппроксимационный синтез, аппроксимационная задача, минимаксный критерий, регулируемая диада.

Введение. В последние годы значительно возрос интерес к манипуляторам с ограниченной подвижностью, которые успешно заменяют универсальные многоподвижные манипуляционные системы со сложными системами управления при автоматизации ряда производственных операций, требующих реализации всего нескольких периодически повторяющихся положений рабочего органа. К преимуществам таких устройств относятся малое число приводов и движущихся масс, простота управления и низкая себестоимость, высокая надежность и благоприятные динамические характеристики [1]. С точки зрения практических приложений, особенно перспективны реконфигурируемые манипуляционные механизмы с малым числом степеней свободы, которые простым регулированием некоторых геометрических параметров способны перенастраиваться в процессе работы на выполнение различных программ перемещений объекта манипулирования [2]. В работе [3] рассматриваются задачи аппроксимационного синтеза реконфигурируемых параллельных механизмов, построенных на базе диад с одним регулируемым параметром методом квадратического приближения. Для повышения точности воспроизведения заданных положений в настоящей статье предлагаются численные решения этих же задач по минимаксному критерию оценки погрешности приближения, которые разработаны с использованием теории и вычислительных методов линейного чебышевского приближения и нелинейного программирования.

Структурный синтез реконфигурируемых манипуляторов. В основе синтеза рассматриваемых манипуляционных механизмов лежит модифицированный

модульный принцип формирования их структурных схем [4], суть которого излагается ниже. Тело e , к которому закреплен рабочий орган манипулятора, перемещается через m упорядоченных множеств заданных положений относительно неподвижного тела E (основания манипулятора), каждое из которых состоит из N_j положений: $e_{ij} (j = 1, 2, \dots, m, i = 1, 2, \dots, N_j)$. Синтезируемые механизмы имеют параллельную структуру и состоят из определенного числа модулей в виде регулируемых двузвенных цепей – диад, соединяющих выходное звено e манипулятора с основанием E (см. рис.), причем их срединные пары в рабочем режиме манипулятора зафиксированы и функционируют лишь в процессе перенастройки механизма на новое множество рабочих положений выходного звена, регулируя расстояние между осями или центрами концевых кинематических пар диады. Допускаем, что срединная регулирующая пара C двузвенных модулей является поступательной или вращательной. Тогда центр или ось концевой кинематической пары каждого двузвенного модуля генерирует некоторое однопараметрическое семейство F_j кривых или поверхностей, соответствующих последовательности значений угловой или линейной координаты регулирующей пары C . Теперь на теле l , перемещающемся через заданные m множества положений, отыскиваем такие точки B и прямые α , которые в заданных положениях e_{ij} аппроксимируют с достаточной точностью кривые или поверхности однопараметрических семейств $F_{kj} (k = 1, 2, \dots, K, j = 1, 2, \dots, m)$, число K которых равно числу выбранных структурных разновидностей двузвенных модулей синтезируемого манипулятора (рис.). Далее вводим связи, принуждающие найденные характеристические точки или линии тела e оставаться на соответствующем семействе кривых или поверхностей F_{kj} . Эти связи можно реализовать посредством регулируемых диад типа СПС, ПлПс, ВВВ, ВПС, ППС, ПВС, соединяющих тело e с основанием E . На рисунке представлены двузвенные регулируемые цепи типа СПС и ВВЦ. Для упрощения записи на рисунке и в дальнейшем изложении пропущен индекс k , поскольку далее речь идет лишь о синтезе отдельных модулей.

Сочетаниями структурно различных двузвенных модулей можно образовать множество вариантов реконфигурируемого манипулятора с заданным числом степеней свободы, отличающихся по точности реализации заданных положений и другим функциональным характеристикам. Для синтеза реконфигурируемых манипуляторов, которые в рабочем режиме, т.е. при фиксации регулирующих пар, действуют как одноподвижные (одноприводные) системы, требуется накладывать пять связей на движение e . Например, для синтеза одноподвижного симметрического параллельного манипулятора с использованием только диад типа СПС необходимо синтезировать пять таких модулей. Особенностью и основным преимуществом предлагаемой методологии аппроксимационного кинематического синтеза является то, что отдельные модули манипулятора проектируются авто-

номно, а сложный вычислительный процесс синтеза системы разбивается на параллельно выполняемые процедуры синтеза отдельных модулей.

С другой стороны, реализация предлагаемой методологии требует решения специального класса задач аппроксимационной кинематической геометрии, связанных с чебышевским приближением множеств положений точек или линий посредством ранее неизученных геометрических образов, описывающих связи регулируемых диад, таких как однопараметрические семейства концентрических окружностей, соосных цилиндров и конусов, линейных конгруэнций, параллельных плоскостей и т.д. Ниже приводятся обобщенная постановка этих аппроксимационных задач и унифицированные итерационные алгоритмы вычисления их решений.




Рис. Модульный принцип структуры синтеза реконфигурируемых манипуляторов

Постановка аппроксимационной задачи синтеза диад по минимаксному критерию. Пусть задано m наборов конечноудалённых положений тела e относительно E , N_j положений в каждом наборе. В системе координат $OXYZ$, связанной с телом E , задано также однопараметрическое семейство m кривых или поверхностей F_{ij} ($i = 1, 2, \dots, m$) (рис.). Требуется определить в системе координат $oxzy$, связанной с телом e , такую точку B или прямую α , множество положений B_{ij} или α_{ij} ($j=1, 2, \dots, m, i=1, 2, \dots, N_j$) которых в смысле чебышевского приближения наилучшим образом аппроксимируют кривые или поверхности семейства F_j .

Искомые характеристические точки B тела e определяются по условию минимакса отклонения множества положений B_{ij} ($j = 1, 2, \dots, m, i = 1, 2, \dots, N_j$) точки B от семейства F_j . Для оценки отклонения сначала выразим координаты точки B в системе $OXYZ$ с помощью матричного уравнения

$$(X_{Bij}Y_{Bij}Z_{Bij})^t = T_{ij}(x_B y_B z_B)^t + (X_{Oij}Y_{Oij}Z_{Oij})^t, \quad (1)$$

где T_{ij} – ортогональная (3×3) матрица вращения, составленная из заданных направляющих косинусов между осями систем OXYZ и $oxyz$; $(X_{Oij}Y_{Oij}Z_{Oij})^t$ – столбцовая матрица, составленная из заданных координат начала системы $oxyz$ в системе OXYZ в положениях e_{ij} тела e .

Уравнения кривых и поверхностей семейства F_j представим в неявном виде

$$F_j(X, Y, Z, a, b_j) = 0, j = 1, 2, \dots, m, \quad (2)$$

где $a = (a_1, a_2, \dots, a_k)$ – вектор постоянных параметров аппроксимирующих кривых или поверхностей; b_j – значения переменного параметра семейства, определяющего j -ю кривую или поверхность семейства F_j .

Подставив координаты X_{Bij} , Y_{Bij} , Z_{Bij} точки B из (1) в левые части уравнения (2), получим систему функций так называемых алгебраических отклонений:

$$\Delta q_{ij} = F_i(X_{Bij}, Y_{Bij}, Z_{Bij}, a, b_i), \quad (3)$$

коррелирующих с определенной точностью с минимизируемыми геометрическими ортогональными отклонениями точек B_{ij} от соответствующих семейств F_j . Нетрудно заметить, что Δq_{ij} являются функциями как искомых координат x_B , y_B , z_B точки B , так и параметров a и b_j аппроксимирующих кривых и поверхностей семейства F_j . В качестве меры отклонения множества точек B_{ij} от семейства F_j воспользуемся чебышевской нормой

$$S(P) = \max_{j \in [1; m]} \max_{i \in [1; NN_j]} |\Delta q_{ij}(P)|, \quad (4)$$

где $P = (P_1, P_2, \dots, P_n)$ – вектор совокупности указанных выше параметров x_B , y_B , z_B , a и b_j . Тогда рассматриваемая аппроксимационная задача сводится к определению такого вектора P^* , для которого имеет место условие

$$S(P^*) = \min_{\{P\}} S(P) = \min_{\{P\}} \max_{j \in [1; m]} \max_{i \in [1; Nj]} |\Delta q_{ij}(P)|. \quad (5)$$

В случае поиска прямой α тела e задача формулируется аналогичным образом. Здесь семействами аппроксимирующих поверхностей F_j являются системы соосных линейчатых поверхностей (круговых цилиндров, конусов, однополостных гиперболоидов, линейчатых конгруэнций), которые в системе координат OXYZ представлены в виде семейств прямых

$$\frac{x - x_{ij}}{l_{ij}} = \frac{y - y_{ij}}{m_{ij}} = \frac{z - z_{ij}}{n_{ij}}, \quad (6)$$

где $x_{ij}(P)$, $y_{ij}(P)$, $z_{ij}(P)$, $l_{ij}(P)$, $m_{ij}(P)$ и $n_{ij}(P)$ – известные функции вектора $P = (P_1, P_2, \dots, P_n)$ постоянных параметров, определяющих прямые (6) в системе OXYZ.

Для оценки отклонения α_{ij} -го положения прямой α тела e от соответствующей прямой семейства (6) прямую α представляем в виде двух несовпадающих точек

$B_1(x_{B_1}, y_{B_1}, z_{B_1})$ и $B_2(x_{B_2}, y_{B_2}, z_{B_2})$. По формуле (1) определяем координаты точек B_1 и B_2 в системе OXYZ. Подставив эти координаты в уравнения (6), получим неувязки

$$\begin{aligned}\Delta q_{ij1} &= (X_{B1ij} - X_{ij})l_{ij}^{-1} - (Y_{B1ij} - Y_{ij})m_{ij}^{-1}, \\ \Delta q_{ij2} &= (X_{B1ij} - X_{ij})l_{ij}^{-1} - (Z_{B1ij} - Z_{ij})n_{ij}^{-1}, \\ \Delta q_{ij3} &= (X_{B2ij} - X_{ij})l_{ij}^{-1} - (Y_{B2ij} - Y_{ij})m_{ij}^{-1}, \\ \Delta q_{ij4} &= (X_{B2ij} - X_{ij})l_{ij}^{-1} - (Z_{B2ij} - Z_{ij})n_{ij}^{-1}\end{aligned}\quad (7)$$

положений точек B_1 и B_2 от семейства прямых (6). В этом случае Δq_{ijk} становятся функциями как искомых координат $x_{B_1}, y_{B_1}, z_{B_1}, x_{B_2}, y_{B_2}, z_{B_2}$ точек B_1 и B_2 , так и параметров a и b_j прямых (6). В качестве меры отклонения множества положений прямой A тела e от соответствующих прямых семейства (6) вновь используем чебышевскую норму

$$S(P) = \max_{k \in [1; 4]} \max_{j \in [1; m]} \max_{i \in [1; N_j]} |\Delta q_{ijk}(P)|, \quad (8)$$

где $P = (P_1, P_2, \dots, P_n)$ – вектор совокупности указанных выше параметров $x_{B_1}, y_{B_1}, z_{B_1}, x_{B_2}, y_{B_2}, z_{B_2}, a$ и b_j . Тогда рассматриваемая аппроксимационная задача сводится к определению такого вектора P^* , для которого имеет место

$$S(P^*) = \min_{\{P\}} S(P) = \min_{\{P\}} \max_{k \in [1; 4]} \max_{j \in [1; m]} \max_{i \in [1; N_j]} |\Delta q_{ijk}(P)|. \quad (9)$$

Алгоритмы решения сформулированных минимаксных задач. Сформулированные выше задачи аппроксимационной кинематической геометрии в общем случае относятся к нелинейным минимаксным задачам, решение которых связано с определёнными трудностями вычислительного характера. Для устранения этих трудностей предлагаются два упрощённых алгоритма численного решения рассматриваемых задач.

Алгоритм 1. Сначала вводим линейные представления функции отклонений $\Delta q_{ij}(P)$ ($j=1, 2, \dots, m, i=1, 2, \dots, N_j$)

$$\bar{\Delta q}_{ij}^{(\lambda)} = \sum_{l=1}^n \frac{\partial \Delta q_{ij}}{\partial P_l} \lambda_l + \Delta q_{ij}(P^\circ); \quad j = 1, 2, \dots, m; \quad i = 1, 2, \dots, N_j \quad (10)$$

вокруг точки $P^\circ = (P_1^\circ, P_2^\circ, \dots, P_n^\circ)$, где через $\partial \Delta q_{ij} / \partial P_l$ обозначены значения частных производных Δq_{ij} в точке P° . Далее решение задачи производится по описанному в [5] алгоритму.

1. Задаваясь начальными значениями искомых параметров $P^\circ = (P_1^\circ, P_2^\circ, \dots, P_n^\circ)$, формируем линейные представления (10).

2. Методом линейного чебышевского приближения [6] решаем минимаксную задачу

$$\bar{\Delta}q_{ij}(\lambda^*) = \min_{\{\lambda\}} \max_{j \in [1; m]} \max_{i \in [1; N_j]} \bar{\Delta}q_{ij}(\lambda),$$

откуда определяем значения $\lambda_l^* (l=1, 2, \dots, l)$ вспомогательных параметров λ_l .

3. Составляем выражения

$$P_l' = P_l^\circ + \lambda_l^*, l = 1, 2, \dots, l.$$

4. Далее точку P° заменяем точкой $P' = (P_1', P_2', \dots, P_n')$ и переходим к п.1 настоящего алгоритма.

Предложенный процесс прекращается при выполнении условия $||\lambda^*|| \leq \varepsilon$, где ε – заданная точность вычислений.

Алгоритм 2. В некоторых случаях, когда на искомые параметры $P_l (l=1, 2, \dots, n)$ наложены ограничения в виде неравенств

$$g_\mu(P) \leq 0, \mu = 1, 2, \dots, M_1, \quad (11)$$

решения рассматриваемых задач удобнее свести к задаче нелинейного программирования. С этой целью функционал качества (4) или (9) заменяем функцией

$$S(P, \alpha) = d \quad (12)$$

и определяем минимум этой функции с учетом ограничений

$$\Delta q_{ij}(P) - d \leq 0,$$

$$\Delta q_{ij}(P) + d \geq 0; j = 1, 2, \dots, m, i = 1, 2, \dots, N_j, \quad (13)$$

$$g_\mu(P) \leq 0; \mu = 1, 2, \dots, M_1.$$

Нетрудно заметить, что решение этой задачи нелинейного программирования приводит к решению рассмотренных уже минимаксных задач.

Синтез регулируемой диады СПС. В качестве примера приведем синтез регулируемой диады СПС, где семейство аппроксимирующих поверхностей – множество концентрических сферических поверхностей (рис.). Здесь алгебраические отклонения (3) положений B_{ij} точки B от соответствующей сферической поверхности семейства F_j принимают вид

$$\Delta q_{ij} = (X_{Bij} - X_A)^2 + (Y_{Bij} - Y_A)^2 + (Z_{Bij} - Z_A)^2 - R_i^2, \quad (14)$$

$$j = 1, 2, \dots, m, i = 1, 2, \dots, N_j.$$

Координаты $X_{Bij}, Y_{Bij}, Z_{Bij}$ точки B определяются по (1):

$$X_{Bij} = a_{11ij}x_B + a_{12ij}y_B + a_{13ij}z_B + X_{0ij},$$

$$Y_{Bij} = a_{21ij}x_B + a_{22ij}y_B + a_{23ij}z_B + Y_{0ij},$$

$$Z_{Bij} = a_{31ij}x_B + a_{32ij}y_B + a_{33ij}z_B + Z_{0ij},$$

где

$$\begin{aligned}
a_{11ij} &= \cos\psi_{ij}\cos\varphi_{ij} - \sin\psi_{ij}\cos\theta_{ij}\sin\varphi_{ij}, \\
a_{12ij} &= -\cos\psi_{ij}\sin\varphi_{ij} - \sin\psi_{ij}\cos\theta_{ij}\cos\varphi_{ij}, a_{13ij} = \sin\psi_{ij}\sin\theta_{ij}, \\
a_{21ij} &= \sin\psi_{ij}\cos\varphi_{ij} + \cos\psi_{ij}\cos\theta_{ij}\sin\varphi_{ij}, \\
a_{22ij} &= -\sin\psi_{ij}\sin\varphi_{ij} + \cos\psi_{ij}\cos\theta_{ij}\cos\varphi_{ij}, \\
a_{23ij} &= -\cos\psi_{ij}\sin\theta_{ij}, a_{31ij} = \sin\theta_{ij}\sin\varphi_{ij}, a_{32ij} = \sin\theta_{ij}\cos\varphi_{ij}, a_{33ij} = \cos\theta_{ij}.
\end{aligned} \tag{15}$$

В (15) $X_{0ij}, Y_{0ij}, Z_{0ij}$ – заданные координаты начала системы $oxyz$ в системе $OXYZ$, а $\varphi_{ij}, \psi_{ij}, \theta_{ij}$ – заданные эйлеровы углы, определяющие ориентацию тела e .

В данном случае искомыми параметрами задачи (5) являются значения регулируемого радиуса R_j ($i=1,2,\dots,m$), координаты x_B, y_B, z_B точки B и координаты X_A, Y_A, Z_A центра A концентрических сфер. Совокупность этих параметров обозначим вектором $P = (P_1, P_2, \dots, P_n)$, где $P_1 = x_B, P_2 = y_B, P_3 = z_B, P_4 = X_A, P_5 = Y_A, P_6 = Z_A, P_7 = R_1, P_8 = R_2, \dots, P_{m+6} = R_m$.

В качестве численного примера приведём синтез реконфигурируемого манипуляционного механизма 5 (СПС), воспроизводящего два набора заданных положений тела e , по 6 положений в каждом (табл. 1).

Таблица 1

Значения обобщенных координат заданных положений тела e

	j	X_{0ij}	Y_{0ij}	Z_{0ij}	ψ_{ij}	θ_{ij}	φ_{ij}
1	1	2,416	6,729	6,748	88,35	132,76	223,57
	2	1,523	5,934	6,492	110,95	141,87	220,58
	3	1,073	5,225	6,282	121,54	136,36	220,49
	4	0,447	4,018	5,779	130,23	111,07	221,90
	5	0,555	4,005	5,866	129,56	87,58	228,41
	6	0,965	5,096	6,159	116,71	68,29	239,02
2	7	0,576	7,886	6,249	143,04	161,90	257,25
	8	0,884	8,379	6,129	192,89	168,43	298,85
	9	1,297	8,961	6,112	233,39	166,92	330,14
	10	0,810	8,363	6,220	210,17	164,91	292,33
	11	-0,226	6,357	6,136	183,57	146,10	254,47
	12	-0,739	4,848	5,849	171,75	121,19	246,78

В табл. 2 приведены координаты центров 5 сферических шарниров B и A пяти ног (модулей) манипулятора соответственно в e и E , значения R_{1k} и R_{2k} ($k=1,2,\dots,5$) регулируемых параметров, а также значения $\max \Delta_{ij}$ нормального отклонения от сферы.

Таблица 2

Искомые параметры механизма 5 (СПС)

	1	2	3	4	5
X_{Aj}	4,7600	3,9014	2,5617	3,6724	6,3824
Y_{Aj}	5,2721	6,2407	5,3176	5,1787	1,7222
Z_{Aj}	0,1636	-0,5755	3,4492	4,9249	6,8671
x_{Bj}	0,0818	0,1097	0,1586	1,1989	-0,0699
y_{Bj}	-0,0215	-0,1010	0,8682	0,5521	-0,0217
z_{Bj}	0,0085	-0,0275	0,2105	-0,1492	0,0567
R_{1j}	7,1427	7,5243	5,4358	6,0105	6,3694
R_{2j}	7,7970	7,5870	15,1384	8,8371	10,0040
$\max \Delta_{ij}$	0,0090	0,0170	0,0190	0,0110	0,0060

Результаты вычислений показали, что применение минимаксного метода приближения позволило улучшить точность приближения в среднем на 44% по сравнению с точностью, полученной при решении этой же задачи методом квадратического приближения в [3].

Заключение. На базе принципа минимакса разработаны численные методы синтеза многофункциональных одноподвижных манипуляторов с возможностью их перенастройки на реализацию двух и более последовательностей заданных положений выходного звена. Рассматриваемые механизмы имеют модульную структуру и образуются соединением выходного звена и стойки посредством диад со срединной управляющей парой, функционирующей в процессе перенастройки. Синтез каждой из составляющих диад проектируемого манипулятора сводится к определению таких точек или линий объекта манипулирования, которые при его прохождении через заданные последовательности положений в смысле чебышевской нормы наименее отклоняются от систем кривых или поверхностей, генерируемых концевыми элементами диады при различных значениях переменного регулируемого параметра управляющей пары. Предлагаемые методы иллюстрируются численным примером синтеза манипулятора типа 5 (СПС) с поступательными парами, регулирующими длины ног манипулятора при его перенастройке на воспроизведение новой последовательности заданных положений и фиксируемыми в процессе их реализации.

Работа выполнена в рамках научной темы 13-2D181, финансируемой Государственным комитетом по науке Министерства образования и науки РА.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Lower – Mobility Parallel Robots: Theory and Applications. Advances in Mechanical Engineering.– Hindawi Publishing Co., 2010.- 80 p.
2. **Sarkissyan Y.L., Kharatyan A.G., Eghishyan K.M., Parikyan T.F.** Synthesis of Mechanisms with Variable Structure and Geometry for Reconfigurable Manipulation

Systems // Proc. Of ASME/IFToMM Int. Conf. on Reconfigurable Mechanisms and Robots, Re Mar.– London, UK, 2009. – P.195-199.

3. **Саркисян Ю.Л., Харатян А.Г., Парикян Т.Ф.** Аппроксимационный синтез реконфигурируемых манипуляционных механизмов с регулируемыми диадами // Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН.- 2009. – Т.62, №3.- С. 251-261.
4. **Саркисян Ю.Л.** Аппроксимационный синтез механизмов. – М.: Наука, Главная редакция физико-математической литературы, 1982.- 304 с.
5. **Саркисян Ю.Л., Джавахян Р.П., Степанян К.Г., Шахпаронян С.Ш.** К теории нелинейных минимаксных задач синтеза механизмов // Машиноведение.– 1983. – №1.– С. 52-60.
6. **Stifel E.** Ober diskrete and lineare Tschebyscheff-Approximation Numerische Mathematik.- 1959.- P. 1-28.

ГИУА (Политехник). Материал поступил в редакцию 12.05.2014.

ՅՈՒ. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Կ.Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ս.Վ. ՎԵՐԼԻՆՍԿԻ

**ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱԿՈՆՖԻԳՈՒՐԱՑՎՈՂ ԶՈՒԳԱՀԵՌ
ՄԱՆԻՊՈՒԼԱՏՈՐՆԵՐԻ ԱՐՈՂՔՄԻՄԱՑԻՈՆ ՄԻՆԹԵԶ ԸՍՏ ՃՇԳՐՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՄԱԶՄԱՑԻՆ ԶԱՓԱՆԻՇԻ**

Դիտարկվում են սահմանափակ շարժունությամբ վերականգնվող զուգահեռ մանիպուլյատորների ապրոքսիմացիոն սինթեզի խնդիրներ՝ ըստ պինդ մարմնի դիրքերի տված հաջորդականությունների վերարտադրության ճշտության մինիմաքսային չափանիշի: Մշակված են ձևակերպված մինիմաքսային խնդիրների թվային լուծման պարզ ալգորիթմներ՝ գծային չեբիշևյան մոտարկումների և ոչ գծային ծրագրավորման հաշվողական մեթոդներով:

Առանցքային բառեր. վերականգնվող մանիպուլյատոր, զուգահեռ մանիպուլյատոր, ապրոքսիմացիոն սինթեզ, ապրոքսիմացիոն խնդիր, մինիմաքսային չափանիշ, կարգավորվող դիադա:

Y.L. SARKISSYAN, K.G. STEPANYAN, S.V. VERLINSKI

**APPROXIMATE SYNTHESIS OF LIMITED MOBILITY RECONFIGURABLE
PARALLEL MANIPULATORS WITH A MINIMAX ACCURACY CRITERION**

Approximate synthesis problems for the reconfigurable parallel manipulators with limited degrees of freedom are considered based on the minimax accuracy criterion for generating rigid body ordered position sets. Simple computational algorithms of numerical solution for the formulated minimax problems are developed by using the methods of linear chebyshev approximations and non-linear programming procedures.

Keywords: reconfigurable manipulator, parallel manipulator, approximate synthesis, approximation problem, minimax criterion, adjustable dyad.

Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ, Տ.Ն. ՍԱՖԱՐՅԱՆ, Ա.Վ. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ, Վ.Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԱԼՅՈՒՄԻՆԱՅԻՆ ՀՐԱՄՈՒՐ ՓՈՇԵՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱԳՈՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՎ
ՄԵՏԱՂԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Համալիր հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ $2,5\%Cu+1,8\%Mg+1,2\%Ni+1,2\%Fe+Al_{100}$ բաղադրությամբ ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքի կառուցվածքը միումից և ծերացումից հետո հետերոգեն է՝ բաղկացած ալյումինի հիմքով պինդ լուծույթից և $CuAl_2$, Al_2CuMg , Al_3FeNi , Al_7Cu_2Fe , Al_6CuNi ինտերմետաղական ֆազերից, որոնք անջատվում են ալյումինի հիմքով գերհազեցած պինդ լուծույթից ծերացման ժամանակ՝ ապահովելով բարձր մեխանիկական հատկություններ մինչև $300...350\text{ }^{\circ}C$ ջերմաստիճանային միջակայքում:

Առանցքային բառեր. ալյումինի փոշի, մետաղափոշիներ, մամլում, տաք արտամղում, թրծում, մխում, ծերացում, պինդ լուծույթ, ինտերմետաղական ֆազ, կարծրություն, ամրություն, հրամրություն:

Ժամանակակից տեխնիկայի գրեթե բոլոր բնագավառներում անընդհատ աճում է հետաքրքրությունն ալյումինային համաձուլվածքների կիրառման նկատմամբ, ինչը պայմանավորված է տվյալ համաձուլվածքի լավագույն համալիր հատկություններով: Ալյումինի արտադրությունը և պահանջարկն անընդհատ աճում է՝ էականորեն գերազանցելով պողպատի, պղնձի, անագի, ցինկի արտադրության աճը:

Արդյունաբերական համաձուլվածքները, որոնք մշակվել են $Al-Cu-Mg$, $Al-Mg-Si$, $Al-Cu-Mg-Si$, $Al-Zn-Mg-Cu$, $Al-Zn-Mg$, $Al-Mg-Li$, $Al-Cu-Li$, $Al-Cu-Mg-Ag$ համակարգերի հիման վրա, ունեն բարձր համալիր հատկություններ ամրացնող ջերմային մշակումից հետո (մխում և ծերացում): Այս համաձուլվածքների մայրակը ներկայացնում է ալյումինի հիմքով պինդ լուծույթ՝ ամրացված ինտերմետաղական դիսպերս ֆազերով, որոնք անջատվում են պինդ լուծույթից ծերացման ժամանակ: Նշվածը վերաբերում է ալյումինի հիմքով բոլոր համակարգերի համաձուլվածքներին, այսինքն՝ ամրացման մեխանիզմն ալյումինային բոլոր համաձուլվածքների համար նույնն է, որը ներկայացնում է գերհազեցած պինդ լուծույթի ստացում և դիսպերս կարծրացում, ընդ որում, կարծրացման մեջ առավել մեծ արժեք է ստանում դիսպերս ամրացման գործընթացը:

Դիսպերս կարծրացման բնագավառում կատարված հետազոտական լայն աշխատանքներով է բնութագրվում ալյումինային կոնստրուկցիոն համաձուլվածքների ժամանակակից զագացման մակարդակը: Ալյումինային համաձուլվածքների կատարելագործման բնագավառում հետագա ուսումնասիրությունները, որոնք պետք է

նպատակաուղղված լինեն նոր կոմպոնենտներով լեգիրման և ալյումինի հիմքով բարձր լուծելիությամբ գերհազեցած պինդ լուծույթների ստացմանը, անկասկած, պետք է շարունակվեն և կարող են տալ ցանկալի արդյունք:

Ամրության, հրամրության, կոռոզիակայունության և մի շարք այլ շահագործման և տեխնոլոգիական բնութագրերի հետագա բարձրացման առավել հեռանկարային ուղին ալյումինային համաձուլվածքի լեգիրումն է այնպիսի մետաղներով, որոնք քիչ կամ զրեթե չեն լուծվում պինդ ալյումինում, սակայն ալյումինի հետ առաջացնում են տարբեր ինտերմետաղական միացություններ: Դրանցից են, առաջին հերթին, անցումային և մի շարք հազվագյուտ հողալկալիական մետաղները: Աղ. 1-ում բերված են ինտերմետաղական ֆազերի բաղադրությունը և միկրոկարծրությունը, որոնք առաջանում են ալյումինային համաձուլվածքում մի շարք անցումային և հազվագյուտ մետաղներով լեգիրման ժամանակ [1, 2]:

Աղյուսակ 1

Անցումային և հազվագյուտ հողալկալիական մետաղների առավելագույն լուծելիությունը պինդ ալյումինում և համաձուլվածքներում առաջացող ինտերմետաղական ֆազերի միկրոկարծրությունը

Համակարգ	Կոմպոնենտների առավելագույն լուծելիությունը պինդ ալյումինում	Ինտերմետաղական ֆազեր	Միկրոկարծրություն Hv, ՄՊա
Al-Mn	1,8 Mn	Al ₆ Mn	5400...5600
Al-Cr	0,9 Cr	Al ₇ Cr	5000...7000
Al-Ti	0,26 Ti	Al ₃ Ti	6000...7000
Al-Zr	0,28 Zr	Al ₃ Zr	4200...7400
Al-Co	0,02 Co	Al ₉ Co ₂	6500...7500
Al-Ni	0,04 Ni	Al ₃ Ni	7000...7700
Al-Fe	0,05 Fe	Al ₃ Fe	8000...11000
Al-Fe-Si	0,05 Fe	α (Al-Fe-Si)	11000

Ինչպես երևում է աղ. 1-ից, ինտերմետաղական ֆազերի կարծրությունը, որոնք առաջանում են ալյումինային համաձուլվածքում՝ դժվար լուծվող անցումային մետաղների հետ, որպես կանոն, արդյունաբերական համաձուլվածքների հիմնական ամրացնող ֆազերի կարծրությունից բարձր է, և դրանք կարող են դառնալ ալյումինի ու նրա համաձուլվածքի արդյունավետ ամրացնողներ [3, 4]:

Քիչ լուծվող անցումային և հազվագյուտ հողալկալիական մետաղներով ալյումինային համաձուլվածքների լեգիրման մեթոդների հետազոտումը, որոնք ապահովում են դիսպերս ինտերմետաղական ֆազերի ստացումը (անցումային ալյումինոիդներ և հազվագյուտ հողալկալիական մետաղներ), բացահայտում է նոր հեռանկարներ ալյումինային համաձուլվածքի ստեղծման համար՝ էապես լավարկված հատկությունների մեծացումով: Այս հետազոտությունների արդյունքում, մասնավորապես [5-8]

աշխատանքներում, կատարվել է ընդհանուր եզրակացություն այն մասին, որ անցումային մետաղների ավելացման օգտակար ազդեցությունն այլումինային համաձուլվածքի հատկությունների վրա կապված է այլումինիդի անցումային մետաղների դիսպերս մասնիկների հետ, որոնք անջատվում են գերհազեցած պինդ լուծույթներից: Անցումային մետաղներով գերհազեցած պինդ լուծույթի առաջացման պայմանները և նրանց ազդեցությունը համաձուլվածքի հատկությունների վրա հետազոտվել են 20-րդ դարի 50-ական թվականներից սկսած, սակայն բոլոր հետազոտությունները վերաբերում են ձուլման եղանակով ստացված համաձուլվածքներին: Ինչ վերաբերում է այլումինային փոշեհամաձուլվածքներին, ապա դա նոր ուղղություն է, որը հետազոտման խիստ կարիք ունի:

Այլումինային հրամուր համաձուլվածքների ամրացնող ֆազերն են՝ CuAl_2 , Al_2CuMg , Al_3FeNi , $\text{Al}_7\text{Cu}_2\text{Fe}$ և Al_6CuNi : Միումից և ծերացումից հետո պինդ լուծույթի մասնակի տրոհման դեպքում այս ֆազերն առանձնանում են դիսպերս մասնիկների ձևով, որոնք էապես բարձրացնում են համաձուլվածքի հրամրությունը: Մ20 մակնիշի համաձուլվածքի բարձր հրամրությունն ապահովվում է շնորհիվ պղնձի, մանգանի և տիտանի բարձր պարունակության, իսկ AK4-1-ինը՝ նիկելի և պղնձի պարունակության, ինչն արգելակում է դիֆուզիոն գործընթացները և առաջացնում դժվար լուծվող մանրահատ ամրացնող ֆազեր, որոնք կայուն են տաքացման ժամանակ կոագուլացման նկատմամբ:

Հրամրության բարձրացման առավել հեռանկարային և մինչ այժմ քիչ հետազոտված եղանակ է եռակալված այլումինային փոշիներից եռակալված այլումինային համաձուլվածքի ստացումը [2]: Դրա համար օգտագործում են այլումինային փոշին, որը պատված է Al_2O_3 օքսիդային թաղանթով, լցնում են մամլաձևերը և մամլում ճնշման տակ, ապա կատարում եռակալում 600°C –ում: Քանի որ այլումինի օքսիդը չի լուծվում այլումինային հիմքում և չի կոագուլացվում, այդ իսկ պատճառով այս համաձուլվածքներն ունեն լավ հրամրություն, ամրություն, բարձր կոռոզիակայունություն, լավ ջերմա- և էլեկտրահաղորդականություն, բարձր մաշակայունություն:


ԵԱՓՀ-1, ԵԱՓՀ-2, ԵԱՓՀ-3, ԵԱՓՀ-4 մակնիշների համաձուլվածքները պարունակում են համապատասխանաբար 6-8, 9-12, 13-17, 18-22 % Al_2O_3 : ԵԱՓՀ-ից պատրաստված արտադրատեսակների հատկությունները հիմնականում կախված են այլումինի օքսիդի պարունակությունից (աղ. 2) և այլումինային փոշու դիսպերսության աստիճանից (նկ. 1) [9]:

Աղ. 2-ում բերված են ԵԱՓՀ-ից պատրաստված լարերի և ժապավենների քիմիական բաղադրությունը և մեխանիկական հատկությունները:

ԵԱՓՀ-ի քիմիական բաղադրությունը և մեխանիկական հատկությունները

Մակ- նիշը	Փորձարկ- ման ջերմաս- տիճանը	Քիմիական բաղադրությունը, %				Մեխանիկական հատկությունները			
		Al	Al ₂ O ₃	Fe	յուղ	σ_d , ՄՊա	$\sigma_{0.2}$, ՄՊա	δ , %	HB, ՄՊա
ԵԱՓՀ-1	20 300 500	հիմքը	6...9	0,2	0,2	260...300 160...180 50...70	200...240 120...140 50...60	8...1 2 3...7 2...6	850
ԵԱՓՀ-2	20 300 500	հիմքը	9...13	0,2	0,25	320...360 170...180 80...90	210...250 150...160 80...90	6...8 4...6 2...3	1000
ԵԱՓՀ-3	20 300	հիմքը	13...18	0,25	0,25	380...450 190...210	320...360 140...160	3...6 4...7	1200

ԵԱՓՀ-ի բարձր ամրությունը բացատրվում է ամրացնող ֆազերի բարձր դիսպերսությամբ և նրանց միջև փոքր հեռավորությամբ: ԵԱՓՀ-ն հրամրությամբ գերազանցում է բոլոր ալյումինային համաձուլվածքներին և լավ մշակվում է տաք արտամղմամբ: Դրանից արտադրում են թիթեղներ, փայլաթիթեղ, խողովակներ, տարբեր պրոֆիլներ, լարեր, դրոշմիչ նախապատրաստվածքներ: ԵԱՓՀ-ը կիրառում են ինքնաթիռաշինությունում, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերությունում, էլեկտրատեխնիկայում, 300...500 °C ջերմաստիճաններում [10]: Այս նյութերի խտությունը հավասար է ալյումինի խտությանը, ուստի չեն զիջում նրան կոռոզիակայունությամբ և անգամ կարող են փոխարինել Ti-ին և կոռոզիակայուն պողպատներին 250...500 °C ջերմաստիճանային տիրույթում աշխատելիս:




Նկ. 1. Ամրացնող ֆազերի դիսպերսության աստիճանի և Al₂O₃-ի քանակության ազդեցությունը ԵԱՓՀ-ի հատկությունների վրա. ա-ԵԱՓՀ-ի մեխանիկական հատկությունների կախվածությունը ամրացնող ֆազերի դիսպերսության աստիճանից, բ-ԵԱՓՀ-ի մեխանիկական հատկությունների կախվածությունը Al₂O₃ դիսպերսության աստիճանից

Ինչպես ցույց են տալիս փորձագիտական հետազոտությունները, ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքները՝ համեմատած ձուլմամբ ստացված ալյումինային հրամուր համաձուլվածքների հետ, օժտված են բարձր ամրությամբ մինչև 300...500 °C ջերմաստիճաններում: Այս համաձուլվածքների կոռոզիակայունությունը համարժեք է մաքուր ալյումինին, իսկ երկաթով և նիկելով լեգիրման դեպքում (մինչև 1,2...1,5%) կարող են երկարաժամկետ աշխատել գոլորշիաօդային միջավայրում 350 °C-ի պայմաններում [11]:


Ելնելով վերոհիշյալից՝ աշխատանքի նպատակն է բացահայտել ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքների կառուցվածքագոյացման գործընթացի մեխանիզմը և կատարել մետաղագիտական հիմնավորում:

Հետազոտության համար ընտրվել է բաղադրիչների լավարկային բաղադրությունը՝ Cu=2,5%, Mg=1,8%, Ni=1,2%, Fe=1,2%, մնացածը՝ Al, որի դեպքում համաձուլվածքի մեխանիկական հատկությունները ստացվել են առավելագույնը՝ $\sigma_s=290...300$ ՄՊա, $\delta=10,5...11,5\%$, HB=100...105 ՄՊա [12]: Տեսական և փորձնական հետազոտություններով որոշվել են 2,5%Cu+1,8%Mg+1,2%Ni+1,2%Fe+Al_{մն} բաղադրությամբ բովախառնուրդի մամլման լավարկային ռեժիմները, որոնք ապահովում են մամլվածքի 20...25% նախնական ծակոտկենություն [13]:

Անձակոտկեն կառուցվածք ստանալու նպատակով եռակալումից հետո մամլվածքները ենթարկվել են տաք արտամղման տարբեր արտամղման գործակիցներով: Ինչպես ցույց է տրված նկ. 2-ում, տաք արտամղումից հետո կառուցվածքն անհավասարակշռված է, իսկ հատիկները՝ դեֆորմացված, ընդ որում, հատիկների դեֆորմացիայի աստիճանը կախված է արտամղման գործակիցից:



ա)




բ)




գ)

Նկ. 2. 2,5%Cu+1,8%Mg+1,2%Ni+1,2%Fe+Al_{մն} ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքի միկրոկառուցվածքը տաք արտամղումից հետո ($\times 200$). $T_{\text{տ}}=525^{\circ}\text{C}$, $\tau_{\text{տ}}=30$ րոպե.
ա) $\lambda=3$, բ) $\lambda=4$, գ) $\lambda=5$


Ծակոտկենության հետազոտումը կատարվել է պիկնոմետրիկ մեթոդով: $\lambda=3$ արտամղման գործակցի դեպքում այն կազմել է 2...3%, $\lambda=4$ -ի դեպքում ստացվել է գործնականորեն անծակոտկեն կառուցվածք: 525 °C ջերմաստիճանում $\tau=20$ ժամ թրծումից հետո, շնորհիվ վերաբյուրեղացման, կառուցվածքը ստացվել է հավասարակշռված (նկ. 3): Միաժամանակ հատիկների սահմանագծերում անջատվել են FeAl₃ և NiAl₃ ինտերմետաղական ֆազերը, որոնք կայուն են և չեն լուծվում մայրակուլում նույնիսկ միսման ժամանակ (նկ. 4): Նշված ֆազերի առաջացումը խանգարում է միսման ժամանակ գերհալեցած պինդ լուծույթի առաջացման գործընթացին, հետևապես և ծերացման ժամանակ ինտերմետաղական ֆազերի անջատմանը: Սակայն այս գործընթացի ազդեցությունն արդյունավետ է միայն բնական ծերացման ժամանակ: Եվ քանի որ այլումինային հրամուր համաձուլվածքները բնական ծերացման չեն ենթարկվում՝ վերադարձի գործընթացից խուսափելու համար, հետևապես՝ նշված ֆազերի ազդեցությունն աննշան է: Նշվածի վառ ապացույցն է բարձր մեխանիկական հատկությունների պահպանումը բարձր ջերմաստիճաններում: Ամրության և կարծրության աճը պայմանավորված է արհեստական ծերացման ժամանակ CuAl₂, Al₂CuMg, Al₃FeNi, Al₃Cu₂Fe և Al₃CuNi ինտերմետաղական ֆազերի անջատմամբ, որը ցույց է տրված նկ. 5-ում:



ա)



բ)




գ)

Նկ. 3. 2,5%Cu+1,8%Mg+1,2%Ni+1,2%Fe+Al₉₀ այլումինային հրամուր փոշեհամաձուլվածքի միկրոկառուցվածքը տաք արտամղումից և թրծումից հետո ($\times 200$). $T_w=525^{\circ}\text{C}$, $\tau_w=30$ րոպե, $T_p=525^{\circ}\text{C}$, $\tau_p=20$ ժամ: ա) $\lambda=3$, բ) $\lambda=4$, գ) $\lambda=5$


Ինչպես երևում է նկ. 3-ից, ծերացման ջերմաստիճանից կախված՝ տեղի է ունենում ինտերմետաղական ֆազերի կոագուլացիայի գործընթաց, ընդ որում, որքան բարձր է ջերմաստիճանը, այնքան մեծ է կոագուլացիայի արագությունը, որով և բացատրվում է փոշեհամաձուլվածքի մեխանիկական հատկությունների անկումը և սողքի արագության մեծացումը:

Տաքացման ժամանակ մշակված համաձուլվածքում տեղի ունեցող ֆազային փոխակերպությունների ընթացքը հետազոտելու նպատակով իրականացվել է դեփվատագրական վերլուծություն. ջերմաստիճանի փոփոխությունը՝ $T=20\ldots 600$ °C,


ջերմաստիճանի փոփոխման արագությունը՝ $V_T=10\text{ }^{\circ}\text{C/րոպե}$, զանգվածի փոփոխությունը՝ մինչև $TG=50\text{ }\mu\text{գր}$, զանգվածի փոփոխման արագությունը՝ $DTG=3\text{ }\mu\text{գր/վրկ}$ և էնթալպիայի փոփոխությունը՝ $DTA=5\text{ }^{\circ}\text{C}$ (նկ. 6):




Նկ. 4. $2,5\%Cu+1,8\%Mg+1,2\%Ni+1,2\%Fe+Al_{\text{մ}}$ ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքի միկրոկառուցվածքը մխումից հետո ($\times 500$). $T_{\text{ա}}=525\text{ }^{\circ}\text{C}$, $\tau_{\text{ա}}=30\text{ րոպե}$, $\lambda=5$, $T_{\text{թ}}=525\text{ }^{\circ}\text{C}$, $\tau_{\text{թ}}=20\text{ ժամ}$, $T_{\text{ս}}=535\text{ }^{\circ}\text{C}$, մխումը ջրում



ա)




բ)



գ)

Նկ. 5. $2,5\%Cu+1,8\%Mg+1,2\%Ni+1,2\%Fe+Al_{\text{մ}}$ ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքի միկրոկառուցվածքը ձերացումից հետո ($\times 500$). $T_{\text{ա}}=525\text{ }^{\circ}\text{C}$, $\tau_{\text{ա}}=30\text{ րոպե}$, $\lambda=5$, $T_{\text{թ}}=525\text{ }^{\circ}\text{C}$, $\tau_{\text{թ}}=20\text{ ժամ}$, $T_{\text{ս}}=535\text{ }^{\circ}\text{C}$, մխումը ջրում. ա) $T_{\delta}=150\text{ }^{\circ}\text{C}$, բ) $T_{\delta}=200\text{ }^{\circ}\text{C}$, գ) $T_{\delta}=250\text{ }^{\circ}\text{C}$, $\tau_{\delta}=25\text{ ժամ}$



Նկ. 6. 2,5%Cu+1,8%Mg+1,2%Ni+1,2%Fe+Al₁₀₀ ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքի դերիվատագիրը. T-ն նմուշի տաքացման ջերմաստիճանի փոփոխությունն է, TG-ն՝ զանգվածի փոփոխությունը, DTG-ն՝ զանգվածի փոփոխության արագությունը, DTA-ն՝ դիֆերենցիալ ջերմային անալիզի կորը կամ էնթալպիայի փոփոխությունը

Ինչպես երևում է նկ. 6-ից, դերիվատագրի վրա առկա են երկու էնդոթերմ փոխակերպություններ: Առաջին փոխակերպությունը սկսվել է 220 °C-ում և ավարտվել 240 °C-ում: Այն արդյունք է $Al+Mg_5Al_8 \rightarrow Al$ պինդ ֆազային ռեակցիայի, որը համընկնում է Al-Mg վիճակի դիագրամի 1,8% Mg պարունակող համաձուլվածքի տաքացման ժամանակ ֆազային փոխակերպությանը: Տաքացման ժամանակ Mg_5Al_8 ինտերմետաղական միացությունն ամբողջությամբ լուծվում է պինդ ալյումինում, ընդ որում, Mg-ի պարունակությունը էվտեկտիկայի ջերմաստիճանում, որը հավասար է 450 °C, կարող է հասնել 17,4% [14]: Ինչ վերաբերում երկրորդ փոխակերպությանը, որը տեղի է ունենում 370...380 °C-ում, ապա այն արդյունք է $Al+CuAl_2 \rightarrow Al$ պինդ ֆազային փոխակերպության, որը համընկնում է Al-Cu վիճակի դիագրամի 2,5% Cu պարունակող համաձուլվածքի տաքացման ժամանակ տեղի ունեցող ֆազային փոխակերպությանը [14]:

Դերիվատագրից հետևում է, որ այլ ֆազային փոխակերպություններ, ինչպես նաև զանգվածի փոփոխություն, օքսիդացման կամ որևէ ֆազի անջատման պատճառով, տեղի չի ունեցել:

Արդյունքները կրկին անգամ ապացուցում են կոմպոնենտների և ջերմային մշակման տեխնոլոգիայի ճիշտ ընտրությունը, որի արդյունքում ապահովվում է ալյումինի հիմքով հրամուր համաձուլվածքի ստացումը:

Այսպիսով, բացահայտվել է, որ տաք արտամղումից հետո փոշեհամաձուլվածքի կառուցվածքը անհավասարակշռված է, իսկ հատիկները՝ դեֆորմացված, ընդ որում, հատիկների դեֆորմացիայի աստիճանը կախված է արտամղման գործակցից (λ): Որքան մեծ է արտամղման գործակցը, այնքան մեծ է դեֆորմացիայի աստիճանը: Ցույց է տրված, որ $\lambda \geq 4$ -ի դեպքում ստացվում է պրակտիկորեն անծակոտկեն կառուցվածք: Թրծումից հետո կառուցվածքը ստացվում է հավասարակշռված, միաժամանակ հատիկների սահմանագծերում անջատվում են FeAl_3 և NiAl_3 ինտերմետաղական ֆազերը, որոնք կայուն են ու չեն լուծվում մայրակում միմյան ժամանակ և ապահովում են բարձր ջերմաստիճաններում միմյան մանրահատիկ կառուցվածքի ստացումը: Ծեղացման ժամանակ ամրության և կարծրության աճը պայմանավորված է CuAl_2 , Al_2CuMg , Al_3FeNi , $\text{Al}_7\text{Cu}_2\text{Fe}$ և Al_6CuNi ինտերմետաղական ֆազերի անջատմամբ, ընդ որում, ծեղացման ջերմաստիճանից կախված՝ տեղի է ունենում այս ֆազերի կոագուլացիայի գործընթաց, և որքան բարձր է ջերմաստիճանը, այնքան մեծ է կոագուլացիայի աստիճանը, հետևապես՝ և՛ մեխանիկական հատկությունների անկումը, և՛ սողքի արագության մեծացումը:

Փոշեհամաձուլվածքի դերիվատագրական վերլուծությամբ բացահայտվել է, որ տաքացման ժամանակ տեղի են ունենում պինդ ֆազային ռեակցիաներ, որոնք համընկնում են Al-Mg և Al-Cu համաձուլվածքների վիճակի դիագրամների փոխակերպություններին, այսինքն՝ այլումինի մեջ սկսում են լուծվել Mg_5Al_8 և CuAl_2 ֆազերը: Տաքացման ժամանակ զանգվածի փոփոխություն, օքսիդացման կամ որևէ նոր ֆազի անջատման պատճառով, տեղի չի ունենում, ինչը կրկին անգամ ապացուցում է կոմպոնենտների և ջերմային մշակման տեխնոլոգիայի ընտրության ճշտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Колачев Б.А., Ливанов В.А., Елагин В.И.** Металловедение и термическая обработка цветных металлов.- М.: Металлургия, 1981.- 416 с.
2. **Елагин В.И.** Пути развития высокопрочных и жаропрочных конструкционных алюминиевых сплавов в XXI столетии // *МиТОМ.*- 2007.- № 9.- С. 3-11.
3. **Добаткин В.И., Елагин В.И., Мудренко Г.А.** Процессы обработки легких и жаропрочных сплавов.- М.: Наука, 1981.- 270 с.
4. **Квасов Ф.И., Фридляндер И.Н.** Алюминиевые сплавы типа дюралюмин.- М.: Металлургия, 1984.- 240 с.
5. **Елагин В.И.** Актуальные вопросы металловедения и технологии легких сплавов // *Технология легких сплавов.*- 2004.- № 5.- С. 25-29.
6. **Филатов Ю.А.** Деформируемые сплавы на основе системы Al-Mg-Sc // *МиТОМ.*- 1996.- № 6.- С. 33-36.
7. **Елагин В.И.** Состояние и пути повышения трещиностойкости высокопрочных алюминиевых сплавов // *МиТОМ.*- 2002.- № 9.- С. 10-19.
8. **Добаткин В.И., Елагин В.И.** Гранулируемые алюминиевые сплавы.- М.: Металлургия, 1981.- 179 с.

9. **Гринева С.И., Коробко В.Н., Кузнецов А.И., Сычев М.М.** Алюминий и сплавы на его основе.- СПб.: СПбГТИ (ТУ), 2003.- 22 с.
10. **Пейсахов А.Н.** Материаловедение и технология конструкционных материалов. - СПб.: Михайлова В.А., 2003.- 416 с.
11. **Fries S.G., Oates W.A.** A thermodynamic assessment of the Au-Cu system // CALPHAD22.- 1998. - № 3. - P. 335-354.
12. **Աղբալյան Ս.Գ., Սաֆարյան Տ.Ն.** Հրամուր պլումինային փոշեհամաձուլվածքների տաք արտադրման գործընթացի փորձագիտական հետազոտումը // ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ տեղեկագիր. ՏԳ սերիա.- 2010.- Հատ. 62, №4.- էջ 367-376:
13. **Աղբալյան Ս.Գ., Սաֆարյան Տ.Ն.** Ալյումինային հրամուր փոշեհամաձուլվածքի բովախառնուրդի մասման գործընթացի հետազոտումը և օպտիմալ ռեժիմների ընտրումը // ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Լրաբեր. Գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու.- Երևան, 2010.- Հատ. 2, №2.- էջ 395-399:
14. **Мондольфо Л.Ф.** Структура и свойства алюминиевых сплавов / Пер. с англ.- М.: Металлургия, 1979.- 640 с.

ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ): Նյութը ներկայացվել է խմբագրություն 30.01.2014:

С.Г. АГБАЛЯН, Т.Н. САФАРЯН, А.В. АНДРИАСЯН, В.Г. ВАРДАНЫАН

ИССЛЕДОВАНИЕ И МЕТАЛЛОГРАФИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРОЦЕССА СТРУКТУРООБРАЗОВАНИЯ ЖАРОПРОЧНЫХ АЛЮМИНИЕВЫХ ПОРОШКОВЫХ СПЛАВОВ

В результате комплексных исследований выявлено, что после закалки и старения структура жаропрочного алюминиевого порошкового сплава состава 2,5%Cu+1,8%Mg+1,2%Ni+1,2%Fe+Al_{ост} является гетерогенной и состоит из твердого раствора на основе алюминия и интерметаллических фаз CuAl₂, Al₂CuMg, Al₉FeNi, Al₇Cu₂Fe, Al₆CuNi, которые в процессе старения выделяются из пересыщенного твердого раствора на основе алюминия, обеспечивая высокие механические свойства до температур в диапазоне 300...350 °С.

Ключевые слова: алюминиевый порошок, металлические порошки, прессование, горячая экструзия, отжиг, закалка, старение, твердый раствор, интерметаллическая фаза, твердость, прочность, жаропрочность.

S.G. AGHBALYAN, T.N. SAFARYAN, A.V. ANDRIASYAN, V.G. VARDANYAN

INVESTIGATION AND METALLOGRAPHIC ANALYSIS OF THE STRUCTURE FORMATION PROCESS OF HEAT-RESISTANT ALUMINIUM POWDER ALLOYS

As a result of complex investigations, it is revealed that after quenching and ageing, the structure of heat-resistant aluminium powder alloy 2,5% Cu +1,8% Mg +1,2% Ni +1,2% Fe + Al_{ost} is heterogeneous and consists of a solid solution based on aluminium and intermetallic phases CuAl₂, Al₂CuMg, Al₉FeNi, Al₇Cu₂Fe, Al₆CuNi, precipitating in the aging process from the supersaturated solid solution based on aluminium, providing high mechanical properties at temperatures in the range 300 ... 350 °C.

Keywords: aluminium powder, metal powders, compaction, hot extrusion, annealing, hardening, ageing, solid solution, intermetallic phase, hardness, strength, heat resistance.

Լ.Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա.Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Դ.Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊՂՆՁԻ ԿՈՐՁՈՒՄԸ ՊՂԻՆՁ-ՑԻՆԿ-ԿԱՊԱՐԱՅԻՆ ՍՈՒԼՖԱՏԱՑՎԱԾ ԲՈՎՎԱԾՔԻ ՏԱՐԲԱԼՈՒԾՄԱՆ ԼՈՒԾՈՒՅԹԻՑ

Ներկայացված են ցինկի և կապարի բարձր պարունակությամբ սուլֆիդապղնձային խտանյութի սուլֆատացված բովվածքի տարրալուծման լուծույթից պղնձի կորզման տեխնոլոգիական առանձնահատկությունները: Ցույց է տրված Cu^{2+} - Zn^{2+} - Fe^{2+} - Fe^{3+} - SO_4^{2-} - H_2O սուլֆատ-թթվային լուծույթից պղնձի ընտրողական կորզման գործընթացում ցեմենտացիայի եղանակի գերակայության նպատակահարմարությունը:

Առանցքային բառեր. սուլֆիդապղնձային խտանյութ, տարրալուծման սուլֆատ-թթվային լուծույթ, ցեմենտացիա, ընտրողական կորզում:

Ներածություն. Հետազոտության համար որպես ելանյութ հանդիսացող՝ ցինկի և կապարի բարձր պարունակությամբ տեղական պղնձային խտանյութի սուլֆատացված բովվածքի 2 %-անոց ծծմբաթթվային տարրալուծման լուծույթում պղինձը, երկաթը և ցինկը առկա են բացարձակապես իրենց սուլֆատների տեսքով (CuSO_4 , FeSO_4 , $\text{Fe}_2(\text{SO}_4)_3$, ZnSO_4), որը, ինչպես հայտնի է, բարենպաստ պայման է՝ հիդրոմետալուրգիական եղանակներով այդ մետաղների արդյունավետ կորզման համար:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նշված լուծույթից անկորուստ ձևով դրանում պարունակվող արժեքավոր մետաղներից պղնձի ընտրողական կորզման գործընթացը և հաստատագրել դրա օպտիմալ տեխնոլոգիական պարամետրերը՝ ստանդարտ որակի մետաղարտադրանքի ստացման համար:

Փորձարկման մեթոդները. Մետաղական իոնների կոնցենտրացիաները լուծույթներում չափվել են ատոմա - աբսորբցիոն սպեկտրասկոպիայի մեթոդով (AAS): Հիմնական և օժանդակ բաղադրիչների պարունակությունները պինդ արգասիքներում որոշվել են քիմիական և էմիսիոն-սպեկտրալ վերլուծության եղանակներով: Պինդ նյութերի ֆազային բաղադրություններն ուսումնասիրվել են ռենտգենակառուցվածքային վերլուծության մեթոդով:

Հետազոտության արդյունքների քննարկումը. Հաշվի առնելով հետազոտվող լուծույթի բավականին բարդ կազմությունը (աղ.1 [1]), ինչպես նաև դրանում պարունակվող որոշ մետաղ-իոնների վերականգնման ռեակցիաների ստանդարտ պոտենցիալների զգալի մոտիկությունը (օրինակ, $E^{\circ}_{\text{Cu}^{2+} + 2e = \text{Cu}} = 0,340$ Վ, իսկ $E^{\circ}_{\text{Fe}^{3+} + 3e = \text{Fe}^{2+}} = 0,771$ Վ [2])՝ որպես վերականգնիչ կողմից ռեակցիայի լիարժեք ընտրողականությանը խանգարող գործոն՝ լուծույթից առաջին հերթին պղնձի ընտրողական կորզման գործընթացը հետազոտվել է երկու տեխնոլոգիական տարբերակների՝ <<էքստրակցիա-ռեէքստրակցիա>> և <<ցեմենտացիա>> մեթոդների հա-

մադրամբ՝ դրանց արդյունքների հիման վրա արտադրական պայմանների համար առավել օպտիմալ գործընթացի երաշխավորման նպատակով:

Աղյուսակ 1

Տարրալուծման հեղուկ արգասիքի (մայրակ-լուծույթի) իոնային բաղադրությունը

Իոնների կոնցենտրացիաները սուլֆատացված բովվածքի տարրալուծման լուծույթում (գ/լ)				
Cu ²⁺	Zn ²⁺	Fe ²⁺	Fe ³⁺	Pb ²⁺ և այլ Pb-իոն
19,38	4,08	20,90	0,98	չեն հայտնաբ.*

* Ելանյութ-խտանյութի երրորդ (ըստ արժեքի) բաղադրիչը՝ կապարը, նախապես կորզվել է բովվածքի թթվային տարրալուծման սորախցուկից հատուկ տեխնոլոգիայով (տե՛ս [1]):

Գիտափորձի առաջին փուլում, էքստրակցիայի-ռեէքստրակցիայի եղանակով [3] լուծույթում առկա Cu²⁺ իոնների կորզման փորձերում, ժամանակակից պրակտիկայում հայտնի <<aldoximes-ketoximes>> դասի օրգանական էքստրագենտների [4, 5] դժվարամատչելիության պատճառով, դրանց փոխարեն օգտագործվել են զոված բուսական յուղեր (ձիթապտղի, եգիպտացորենի, սոյայի, արևածաղկի), որոնք ըստ [6] արտոնագրի հեղինակների, պղնձի երկվալենտ իոնների նկատմամբ նույնպես օժտված են բարձր կատիոնափոխանակիչ ընտրողականությամբ այլ մետաղների (հատկապես երկաթի) իոններ պարունակող ջրային միջավայրերում: Այդ նպատակով սկզբում պղինձը կորզվել է 8 գ/լ Cu²⁺, 8 գ/լ Fe²⁺, 0,5 գ/լ Fe³⁺ և 4 գ/լ Zn²⁺ բաղադրությամբ մոդելային ջրային լուծույթից, որի պատրաստման համար օգտագործվել են ռեակտիվային CuSO₄·5H₂O, ZnSO₄·7H₂O և FeSO₄·7H₂O, ինչպես նաև տեխնիկական մաքրությամբ Fe₂(SO₄)₃ սուլֆատներ: 200-ական մլ ծավալով լուծույթի փորձանմուշներին ավելացվել է 80-ական մլ ծավալով էքստրագենտ (բուսական յուղ) և խառնվել 4,5 ժամ տևողությամբ մթնոլորտային ճնշման և սենյակային ջերմաստիճանի պայմաններում, խառնուրդի pH–ը պահելով 10,5...11,0 սահմաններում (NaOH-ի պարբերաբար ներմուծմամբ): Էքստրակցիայից հետո խառնուրդները թողնվել են հանգստանալու 24 ժամ/ա ընթացքում, որպեսզի օրգանական և ջրային ֆազերը առանձնանան միմյանցից: Հանգստից հետո փորձանոթների վերին մակարդակներում կուտակված օրգանական ֆազերը (Cu²⁺ իոններով հագեցած էքստրագենտները) խնամքով անջատվել են ջրային ֆազերից: AAS մեթոդով չափվել են Cu²⁺-իոնների մնացորդային կոնցենտրացիաները ջրային ֆազերում, և յուրաքանչյուր փորձի համար որոշվել է էքստրակցիայի ժամանակ Cu²⁺ իոնների բաշխման գործակիցը՝

$$D_{բաշխ} = C_{օրգ} / C_{ջր}, \quad (1)$$

որտեղ C_{օրգ.}–ն օրգանական ֆազ անցած պղնձի կոնցենտրացիան է, C_{ջր.} –ը՝ ջրային ֆազում մնացած պղնձի կոնցենտրացիան:

Պղնձի ռեէքստրակցիան Cu²⁺ իոններով հագեցած օրգանական մասից իրակացվել է թորած ջրով պատրաստված ուժեղ ծծմբաթթվային լուծույթով (230 գ/լ H₂SO₄)

միատեսակ ջերմաստիճանային և ժամանակային պայմաններում: Ընդ որում, ռե-
էքստրակցիայի լուծույթի ծավալը վերցվել է 2 անգամ ավելի պակաս (100 մլ), քան
էքստրակցիայի լուծույթինը, որպեսզի ապահովված լինի նրանում պղնձի հարմար
կոնցենտրացիա՝ հետագա էլեկտրակորզման համար: Պղնձի իոններից բեռնաթափ-
ված էքստրագենտների հեռացումից հետո ստացված ջրային ֆազերում (ռեէքս-
տրակտներում) AAS վերլուծության մեթոդով չափվել են Cu^{2+} իոնների կոնցենտրա-
